

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԱԹՈՌՈՑ ԴԻԻԱՆԷՆ

Նախորդ հաղորդագրութեամբ, Երուսաղէմի դէպքերը բերուած էին այն կէտին երբ Տէրտէրեան Արքեպս. դատ բացած էր Ներքին Դործոց Նախարարին եւ Ս. Աթոռոյ Տեղապահին դէմ, եւ ի հետեւանա որոյ Բարձր. Ատեանը առժամեայ կերպով կեցնել հրահանգած էր պատրիարքական ընտրութեան գործողութեան երկրորդ մասը: — Այս դատավարութիւնը սկսաւ Փետր. 13ին: Դատարանը նախ մերժեց նկատի առնել Տէրտէրեան Արքեպս.ի պահանջը որ իր տեղապահական պաշտօնէն դադարեցուիլը ապօրէն յայտարարուի: Ապա ունկնդրեց Պատրիարքարանիս փաստաբաններուն պաշտպանած թէզը թէ Բարձր. Ատեանի իրաւասութեան սահմանին մէջ չիյնար Պատրիարքարանիս ներքին ընտրական գործերով զբաղիլը: Դատին համար տրամադրուած ժամանակը սպառած ըլլալով, նիստին շարունակութիւնը յետաձգուեցաւ Մարտ 10ին:

Գեր. Տեղապահ Ս. Հայրը Փետր. 13ին Ս. Էջմիածնէն ստացաւ հետեւեալ հեռագիրը: «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Փետր. Տի Գիւսիքն առաջարկով Վեհափառ Հայրապետ Փետրուար 10ին Տէրտէրեան Արքեպիսկոպոսի յղեց հետեւեալ հեռագիրը. — Վերջին անգամ ըլլալով Ձեզ կը դիմեմ յորդորելով որ ժամանակն է որ Բաբելոնի ամէն գործէ ու ես կենամ Ձեր Արքեպիս. եւ Միաբանութեան դէմ Ձեր բոլոր ձեռնարկներէն: Լսեցէ՛ք Նկեղեցիին եւ Ազգին ձայնը. օգնեցէ՛ք դուք ձեզի որպէսզի մեմ ալ կարողանանք Ձեզ օգնել: Կը սպասենք Ձեր պատասխանին մինչեւ 16 Փետրուարի: Վազգէն Առաջին»:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Կ. Պոլսոյ Ամենապատիւ Տ. Գարեգին Պատրիարքին կողմէ Էջմիածնէն ստացուած հեռագրի մը մէջ կ'ըսուէր հետեւեալը: «Տէրտէրեան 12 Փետրուար հեռագրով կը մերժէ ես կենալ իր դատական գործէն»:

Մինչ այդ, Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովը, գործադրելով Միաբանական Ընդհ. Ժողովի իր 1956 Դեկտ. 20ի նիստին մէջ տուած հրահանգը, քննութեան ենթարկեց Ներքին Արքեպս.ի Ս. Յակոբեանց Ուխտի Միաբանութենէն արտաքսելու առաջարկը որ բերուած էր Միաբանական Ընդհ. Ժողովի նոյն նիստին: Եւ ապա գտած ըլլալով որ Ներքին Արք. Տէրտէրեան ինը ժանր յանցանքներով մեղանշած էր եկեղեցական ու Միաբանական կանոններու դէմ, այս պարագան հաղորդեց Տէրտէրեան Արք.ին 15 Փետր. 1957 թուակիր նամակով մը, եւ առժամանակեայ կերպով զինք կախակայեց Միաբանական իր իրաւունքներէն, եւ հրաւիրեց զինքը յետս կոչել իր զրպարտութիւնները եւ անիրաւ յայտարարութիւնները ու ներողութիւն խնդրել այն իշխանութիւններէն եւ անձերէն՝ որոնց դէմ մեղանշած էր, եւ պաշտօնապէս խոստանալ ուղղել իր ընթացքը: Տէրտէրեան Արք. 25 Փետր. 1957 թուակիր ընդարձակ նամակով մը, եւ բարձրաստիճան եկեղեցականի մը անվայել ոճով պատասխանեց Տնօրէն Ժողովոյ յիշեալ պաշտօնագրին: — Տնօրէն Ժողովը կրկին նկատի ունենալով, մէկէ աւելի նիստերու մէջ, իր քննութեանց արդիւնքը եւ Տէրտէրեան Արք.ի նամակը, 2 Մարտ 1957 թուակիր ընդարձակ տեղեկագրով մը խնդիրը ներկայացուց Միաբանական Ընդհ. Ժողովին, եւ միաձայնութեամբ առաջարկ բերաւ որ Ներքին Արքեպս. Տէրտէրեան արտաքսուի Ս. Յակոբեանց Միաբանութենէն:

Միաբանական Ընդհ. Ժողովը իր Մարտ 5ի նիստին մէջ ունկնդրեց Տնօրէն Ժողովոյ տեղեկագիրը, ինչպէս նաեւ Ներքին Արք.ի վերոյիշեալ նամակը, եւ համաձայն Միաբանական Կանոնի 15րդ յօդուածի տրամադրութեանց, որոշեց արտաքսել Ներքին Արք. Տէրտէրեանը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանութենէն:

Այս որոշումը Տեղապահ Ս. Հօր կողմէ ենթակային հաղորդուեցաւ 6 Մարտ 1957 թուակիր նամակով: Նոյնը հաղորդուեցաւ նաեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ Ս. Քաղաքի Վսեմաշուք Կառավարիչին:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՑ